

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Ներածություն**

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2002 թվականին իր գործունեությունն իրականացրել է հետևյալ կազմով.

Վարդան Մովսեսյան՝	հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Ռոբերտ Խարազյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով:

Աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի վարչություն,
- հասարակության հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## *Սակագնային քաղաքականություն*

Բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործընթացի շրջանակում հանձնաժողովը 2002 թվականին մշակել և հաստատել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը մասնավորեցման պահից տրամադրված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, որը ներառում է նաև սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկան՝ հիմք ունենալով անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը: Այս սկզբունքով հաշվարկված սակագնային մարժան պետք է ապահովի բնականոն տնտեսական գործունեության համար ընկերությանն անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերը, օգտագործվող հիմնական միջոցների իրատեսական ծառայության ժամկետից ելնելով՝ հաշվարկված մաշվածության հատուցումը և ներգրավված կապիտալի դիմաց խելամիտ շահույթի ստացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում անփոփոխ թողնելով վերջնական սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագները, վերանայվել են էլեկտրա-էներգետիկայի ոլորտի գործող ներքին սակագները.

- էլեկտրաէներգիա արտադրող կայանների համար (բացի փոքր ՀԷԿ -երից) երկդրույք սակագնային համակարգում սահմանվել են առաքվող էլեկտրաէներգիայի նոր դրույքներ և հզորության ամսական նոր վճարներ,
- «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համար՝ էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության վճար (արտադրող կայաններից առաքված էլեկտրա-էներգիայի ամբողջ քանակի համար) և ծառայության հաստատագրված ամսական վճար:

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումներին զուգընթաց, որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև սակագնային համակարգը: Աշխատանքներ են տարվել համակարգի օպերատորի, պայմանագրային կենտրոնի, հաշվարկային կենտրոնի և էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող այլ ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդաբանության մշակման ուղղությամբ: Ընդ որում, «Հայէներգո» ՓԲԸ-ից «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի առանձնացման հետ կապված՝ հանձնաժողովը սահմանել է էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման համար հաստատագրված ամսական վճար և էլեկտրական

Էներգիայի արտահանման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց համար էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման սակագին:

Վերանայվել են «ՁորաՀԷԿ» ՓԲԸ-ի, ինչպես նաև նոր կառուցված չորս փոքր ՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի արտադրության սակագները:

Սահմանվել են «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունից առաքվող ջերմային էներգիայի, ինչպես նաև 2002-2003 թվականների ծնունդով ժամանակաշրջանում ջերմային էներգիա մատակարարող ընկերությունների կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման սակագները:

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջները, հանձնաժողովը կարևորում է սակագների տարր կազմող մեծությունների հաշվարկման մեթոդիկաները: Այդ առնչությամբ 2002 թվականին մշակվել և հաստատվել են.

- «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ի պահուստում գտնվող սարքավորումների և ներկայանային տեխնոլոգիական ենթակառուցվածքների վրա էլեկտրական և ջերմային էներգիայի նորմատիվային ծախսերի հաշվարկման մեթոդիկան,
- ջերմային էներգիայի և ջերմակրի հաշվառքի մեթոդիկան,
- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի պահուստում գտնվող սարքավորումների և ներկայանային տեխնոլոգիական ենթակառուցվածքների վրա էլեկտրական և ջերմային էներգիայի նորմատիվային ծախսերի հաշվարկման մեթոդիկան,
- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ոչ բլոկային մասի մեկ կաթսա, մեկ տուրբին աշխատելու պայմաններում վառելիքի տեսակարար ծախսի ելակետային նորմատիվային բնութագրերը և հաշվարկման մեթոդիկան,
- լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող զարգացման և ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը:

Ավարտման փուլում են գտնվում էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի և փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայի մշակման աշխատանքները:

Էլեկտրաէներգետիկայի բնագավառի կարևորագույն խնդիրներից է ժամանակակից հաշվառման համակարգի ներդրման գործընթացը: Երկսակագնային հաշվառքի սարքերի ներդրումից հետո սպառողների և ենթասպառողների էլեկտրաէներգիայի հաշվառման գործընթացում որոշակի դժվարություններ էին

առաջացել: էլեկտրամատակարարող ընկերության և սպառող-ենթասպառող փոխհարաբերությունների կանոնակարգման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովի կողմից մշակվել ու հաստատվել են «Երկսակագնային համակարգում սպառողի և նրա ենթասպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի հաշվառման կարգը» և «Ենթասպառողների էլեկտրամատակարարման համար սպառողի մատուցած ծառայության վճարների հաշվարկի մեթոդիկան»:

Հանձնաժողովը մշակել և Ազգային ժողով է ներկայացրել 2003 թվականի իր գործունեության ծրագիրը, որում կանխատեսումներ են կատարվել էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի սպառման, բնական գազի ներկրման, էլեկտրական էներգիայի արտադրության, արտահանման և ներկրման ծավալների վերաբերյալ:

### ***Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն***

Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները ներկայացրել են 2001 թվականի տարեկան և 2002 թվականի 9 ամիսների ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա կատարվել է ընկերությունների ֆինանսական վիճակի վերլուծություն:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունների 2001 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ վերլուծությունն ընդգրկում է էներգետիկայի բնագավառում արտադրության, ներկրման, արտահանման և սպառման ծավալները, գործունեության ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը, շահագործման ծախսերը, վառելիքի տեսակարար ծախսերը, ինչպես նաև պետբյուջեի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի հանդեպ պարտավորությունները և այլն: Վերլուծության արդյունքները նպաստել են էներգետիկայի բնագավառում հիմնավորված սակագների սահմանմանը:

Ավարտին են մոտենում ազգային հաշվային պլանին և այլ իրավական ակտերին համապատասխանող ենթահաշիվների համակարգ ստեղծելու և ներդնելու, այդ համակարգի վերաբերյալ հրահանգչական ցուցումներ մշակելու ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչի շնորհիվ լիցենզավորված

գործունեությանը վերաբերող ծախսերն ու եկամուտները կտարանջատվեն և կհստակեցվեն, կկատարելագործվեն կարգավորմանը վերաբերող հաշվետվությունները՝ նպաստելով հետագայում լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ֆինանսական աուդիտի միասնական համակարգի ներդրմանը:

Հանրությանը էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության մասին պարբերաբար իրազեկելու նպատակով հանձնաժողովը լիցենզավորված ընկերությունների համար մշակել է տեխնիկատնտեսական հաշվետվության նոր ձևեր, որոնք ընդգրկում են հետևյալ տեղեկատվությունները.

- էլեկտրաէներգիա արտադրող կայանների կողմից արտադրված և վաճառված էլեկտրաէներգիայի (հզորության) քանակը, արժեքը (ըստ հաշիվ-ապրանքագրերի) և դրա դիմաց ստացված գումարները,
- արտահանված և ներմուծված էլեկտրաէներգիայի քանակները, արժեքները և դրանց դիմաց կատարված վճարումները,
- բաշխիչ ընկերության կողմից գնված էլեկտրաէներգիայի քանակը, արժեքը (ըստ հաշիվ-ապրանքագրերի) և դրա դիմաց կատարված վճարումները,
- վերջնական սպառողներին մատակարարված էլեկտրաէներգիայի քանակը (ըստ սպառողների խմբերի) և դրա դիմաց կատարված վճարումները,
- էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստները հաղորդման և բաշխման ցանցերում,
- յուրաքանչյուր ջերմաէլեկտրակայանի կողմից գնված վառելիքի արժեքը և դրա դիմաց կատարված վճարումները,
- էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություն մատուցող ընկերություններին վճարված գումարները:

Այս տեղեկատվությունները հանձնաժողովի կողմից կիրառարակվեն յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը:

«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մասնավորեցումից հետո բաշխիչ ընկերությանը տրամադրված լիցենզիայի պայմանների համաձայն՝ օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից փոխանցված կամ կանխիկ գանձված գումարները մուտքագրվում են հատուկ հաշվեհամարում: Հանձնաժողովը հաստատել է հատուկ հաշվից վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգ, որով էլեկտրաէներգետիկական

համակարգի ֆինանսական հոսքերը դառնում են առավել թափանցիկ և նախադրյալներ են ստեղծվում «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից գնված էլեկտրական էներգիայի դիմաց 100% վճարումներն ապահովելու համար:

### ***Լիցենզավորում և իրավական դաշտի կատարելագործում***

2002 թվականի ընթացքում, համաձայն «Էներգետիկայի մասին», «Իրավական ակտերի մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքների պահանջների, հանձնաժողովի կողմից մշակվել ու հաստատվել են մի շարք կարգեր, պայմանագրերի օրինակելի ձևեր և գործունեության լիցենզիայի պայմաններ: Մասնավորապես, լրամշակվել ու հաստատվել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը», որով սահմանվել են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության 19 տեսակների լիցենզիայի հայտերի ընդունման, քննարկման, լիցենզիայի տրամադրման (մերժման), լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, կորստի դեպքում՝ լիցենզիայի կրկնօրինակի տրամադրման ընթացակարգերը: Վերոհիշյալ կարգի 6-ամսյա կիրարկումը ցույց տվեց, որ «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգը» լրամշակման կարիք ունի: Ներկայումս լրամշակված և հաստատված նոր կարգն ապահովում է տևական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում մրցակցության և արդյունավետ գործունեության խթանումն ու մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Էներգետիկայի բնագավառում ներկրման և արտահանման գործունեության իրականացման վերաբերյալ լիցենզիայի հայտի ընդունման, քննարկման, լիցենզիայի տրամադրման (մերժման) և լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման ընթացակարգերը կանոնակարգելու նպատակով հանձնաժողովը մշակել և հաստատել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզավորման ժամանակավոր կարգը»:

Մշակվել, հաստատվել և մասնավորեցման պահից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն են տրամադրվել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները և էլեկտրաէներգիայի առուվաճառքի (մեծածախ գնորդ (վաճառող)-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի դեկտեմբերի 4-ին վավերացված՝ ՀՀ սեփականություն հանդիսացող «Հրազդանի ջերմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գույքային համալիրը Ռուսաստանի Ղաշնությանը որպես սեփականություն փոխանցելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Ղաշնության կառավարությանների միջև կազմված արձանագրությունը, հանձնաժողովը մշակել և 2003 թվականին հաստատել է Ռուսաստանի Ղաշնության անունից «Հրազդանի ջերմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գույքային համալիրով Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն սկսող իրավաբանական անձին տրամադրվող էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները:

2002 թվականին հանձնաժողովը սերտորեն գործակցել է ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը համապատասխանեցնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի պահանջներին:

Մշակվել և հաստատվել են «Հրազդանի ջերմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ջերմային էներգիայի արտադրության լիցենզիայի պայմանները, «Գործունեության լիցենզիայում փոփոխություններ կատարելու կարգը», հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը: Հաստատման փուլում են պայմանագրային կենտրոնի և համակարգի օպերատորի գործունեության լիցենզիաների պայմաններն ու լիցենզիայի պայմանների խախտման համար սահմանվող տույժերի կիրառման կարգը:

2002 թվականի ընթացքում հանձնաժողովում գրանցվել է ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց միջև կնքված՝ գործունեության 129 պայմանագիր, տրվել է գործունեության 19 լիցենզիա, այդ թվում՝

- ա) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 8, արտադրական գործունեության՝ 5 լիցենզիա,
- բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա,

- գ) հաշվարկային կենտրոնին՝ ծառայության մատուցման լիցենզիա,
- դ) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝ էլեկտրական էներգիայի արտահանման և ներկրման լիցենզիա,
- ե) երկարաձգվել են 21 լիցենզիաների գործողության ժամկետները:

Փոքր հզորության կաթսայատների վերականգնման աշխատանքներն արագացնելու, այդ ոլորտում ներդրումները խրախուսելու նպատակով հանձնաժողովը հաստատել է կաթսայատների վերականգնման գործունեության լիցենզիաների նոր պայմանները: ԱՄՆ-ի, Հոլանդիայի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների փոխգործակցության արդյունքում ստացված դրամաշնորհի միջոցով իրականացվել է նախադեպը չունեցող փորձնական ծրագիր. Երևան քաղաքի փոքր հզորությամբ կաթսայատների կառուցման համար հանձնաժողովը տրամադրել է գործունեության 2 լիցենզիա:

2002 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից լիցենզիաների տրամադրման, դրանց ժամկետների երկարաձգման, ինչպես նաև տարեկան լիցենզիոն տուրքերը գանձելու շնորհիվ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 193 մլն դրամ պետական տուրք:

### ***Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ***

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի կանոնների ձևավորման շրջանակում մշակվել են էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց և սպառողների փոխհարաբերությունները հստակեցնող կարգեր: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է էլեկտրաէներգիայի հաշվառման ստատիկ և ինդուկցիոն հաշվառքի սարքերի կիրառումը, ինչը որոշակի դժվարություններ է առաջացնում սպառող-ենթասպառող փոխհարաբերություններում, իրականացվել է մոնիթորինգ, որի հիման վրա մշակվել և հաստատվել է «Երկսակագնային համակարգում սպառողի և նրա ենթասպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի հաշվառման կարգը»:

Իրականացնելով Հայաստանի Հանրապետությունում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացումը խթանող քաղաքականություն, հանձնաժողովն անցկացրել է 14.2ՄՎտ տևակայված գումարային հզորությամբ յոթ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և կառուցման լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգելու վերաբերյալ ներկայացված երկու հայտերի փաստաթղթերի

տեխնիկատնտեսական հիմնավորումների և նախագծերի մոնիթորինգ: Քննարկվել և անհրաժեշտ տեխնիկական օգնություն է ցույց տրվել այդ փաստաթղթերում ևած տնեկատվությունն ու օգտագործված սարքավորումների տեխնիկական պարամետրերը հիմնավորելու ուղղությամբ:

Անցկացվել է երեք փոքր ՀԷԿ-երում (2.625ՄՎտ գումարային հզորությամբ) էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ հայտերում առկա տնեկատվությունների հիմնավորվածությունն ստուգելու, տնակայված սարքավորումների տեխնիկական և տնտեսական պարամետրերի համապատասխանությունը նախկինում ներկայացված և հանձնաժողովի հավանությանն արժանացած պարամետրերի հետ համեմատելու մոնիթորինգ:

Մոնիթորինգի արդյունքում որոշակի ճշգրտումներ են կատարվել «ՋորաՀԷԿ» ՓԲԸ-ի 26,5ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ հայտի տեխնիկական փաստաթղթերի հաշվարկներում:

«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մասնավորեցման հետ կապված՝ ուսումնասիրվել են մինչև մասնավորեցման պահը սպառողների ունեցած պարտքերը հավաքագրելու, իսկ դրանք չվճարելու դեպքում՝ էլեկտրամատակարարումն ընդհատելու, ինչպես նաև անպարտաճանաչ սպառողների հետ կանխավճարով աշխատելու խնդիրները՝ համապատասխան փոփոխություններ կատարելով էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոններում: «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության մոնիթորինգի արդյունքում փոփոխվել է վերոհիշյալ կանոններում ամրագրված վճարման ժամանակահատվածը, նպատակ ունենալով այն համապատասխանեցնել արտադրող կայաններին վճարելու պայմանագրային ժամկետին:

Հաստատվել են բաշխիչ ընկերությունների կողմից ներկայացված՝ սակագնի տարր կազմող մեծությունների հաշվարկման մեթոդիկաները, որոնցով որոշվում են բաշխիչ ցանցերում էլեկտրաէներգիայի և բնական գազի տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, սեփական և տնտեսական կարիքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի և բնական գազի քանակները: Նշված մեթոդիկաների հիման վրա կատարված հաշվարկները հնարավորություն են տալիս սակագներ սահմանելիս հիմք ընդունել ճշգրիտ և հիմնավորված մեծություններ:

Էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություն մատուցող հաշվարկային կենտրոնի և ՀՀ էներգետիկայի նախարարության հետ համատեղ հանձնաժողովը 2002

թվականին մշակել և հաստատել է հաշվարկային կենտրոնի գործառույթներն իրականացնելու կարգը:

### **«*Էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացում***

2002 թվականին շարունակվել է էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացման գործընթացը, որը նպատակաուղղվել է համակարգի ֆինանսական հոսքերի կառավարման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանն ու պայմանագրային դաշտի հետագա բարելավմանը:

Էլեկտրաէներգետիկական շուկայի հետագա բարեփոխման առաջնահերթ խնդիրներն են համարվելու էլեկտրաէներգիա արտադրողների և բաշխիչ ցանցերի միջև ուղիղ պայմանագրային հարաբերությունների ներդրումը և մեծածախ շուկայի համապատասխան կառուցվածքի ձևավորումը:

Մասնավորեցված բաշխիչ ցանցերի կողմից գնված էլեկտրաէներգիայի դիմաց 100% վճարումների պայմաններում շուկայի բարեփոխմանը միտված այդ քայլերը կնպաստեն էներգետիկական համակարգի ֆինանսական կայունության և, հետևաբար, անվտանգության ու հուսալիության բարձրացմանը:

### ***Սպառողների հետ տարվող աշխատանքները***

Հանձնաժողովի հասարակության հետ կապերի բաժնի մասնագետները հանդիպումների ընթացքում սպառողներին ծանոթացրել են իրենց իրավունքներին և պարտականություններին, էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոններին:

Սպառողների ահազանգներին, գրավոր բողոքներին, հարցադրումներին տրվել են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ՝ կարևորելով մատակարար-սպառող փոխհարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը: Վիճահարույց հարցերը քննարկվել են շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և ստացել համապատասխան լուծում:

2002 թվականի ընթացքում ստացվել է 173 բողոք, որից 58-ը՝ գրավոր, 115-ը՝ բանավոր (հեռախոսով), 152-ը՝ բնակիչներից, 21-ը՝ իրավաբանական անձանցից :

Բողոքների մեծ մասը վերաբերել է էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրման, հաշվառքի սարքի տևադրման, փոխարինման և ստուգման կարգի

խախտման փաստերին, հաշվառքի սարքի տեսանելիության չապահովման խնդրին և այլն:

Բաշխիչ ցանցերի մասնավորեցումից հետո ստացված բողոքների վերլուծությունը ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրմանն առնչվող բողոքները նվազման միտում ունեն, բայց հաշվիչների տեսանելիության ապահովման, բնակչությանը վճարման վերաբերյալ տրվող տեղեկատվության, հաշվիչների ստուգման և փոխարինման կարգի պահպանման հարցերում կան բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Գազամատակարարման բնագավառում բողոքները հիմնականում վերաբերում են գազամատակարարման վերականգման կարգի խախտմանը և նոր սպառողների գազամատակարարման ապահովման հետ կապված խնդիրների անորոշությանը:

***Ջանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ***

Իր գործունեության ընթացքում հանձնաժողովն ապահովում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ամրագրված կարգավորման թափանցիկության սկզբունքը: Հանձնաժողովի ընդունած նորմատիվ ակտերը հրապարակվում են «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»:

2002 թվականի ապրիլ ամսին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվել է հանձնաժողովի 2001 թվականի գործունեության հաշվետվությունը, իսկ հոկտեմբեր ամսին՝ ՀՀ Ազգային ժողովում, 2003 թվականի գործունեության ծրագիրը:

2002 թվականի ընթացքում հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, աշխատակազմի մասնագետները «Հ1», «Երևան», «Շանթ», «ԱԼՍ» հեռուստա-ընկերություններով, «Հանրային», «Ազատություն» ռադիոկայաններով անհրաժեշտ պարզաբանումներ են տվել մատակարար-բաժանորդ փոխհարաբերությունների, սակագների սահմանման և բնակչությանը հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ:

Հանձնաժողովի ընդունած կարևորագույն որոշումների մասին պարբերաբար հաղորդագրություններ են տպագրվել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, համապատասխան տեղեկատվություն է հաղորդվել լրատվական գործակալություններին: ՋԼՍ-ներով տեղեկատվություն է հաղորդվել բաշխիչ ցանցերի մասնավորեցման,

մատակարար-սպառող փոխհարաբերությունների կարգավորման, էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխման գործընթացների մասին: «Արմենպրես» լրատվական գործակալությունում հրավիրվել է մամուլի ասուլիս, որտեղ հանձնաժողովի նախագահը ներկայացրել է էներգետիկայի համակարգային բարեփոխումների ծրագիրը, փոքր ՀԷԿ-երի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականությունը, բաշխիչ ցանցերի մասնավորեցումից հետո սակագնային մարժայի ձևավորման և էներգետիկական հզորությունների զարգացման մանրամասները: Հանրային ռադիոյով այլընտրանքային էներգետիկայի մասին տրվել է հաղորդումների շարք, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հոդված է հրապարակվել հողմաէներգետիկայի մասին:

Արդյունավետ աշխատանք է տարվել հասարակական կազմակերպությունների հետ. հանձնաժողովի նախագահը մասնակցել է «Հակաստվեր» հասարակական կազմակերպության կողմից հրավիրված «Գերկորուստներ և սակագներ» թեմայով կլոր սեղանին: Միջոցառում է իրականացվել «Թիմ» հասարակական կազմակերպության հետ համատեղ. հանձնաժողովը «Անկախ լրագրողների միջազգային ասոցիացիա» շրջանակներում հյուրընկալել է Վրաստանի երիտասարդ լրագրողների պատվիրակությանը, քննարկվել են էներգետիկական տարածաշրջանային խնդիրներ: «Թիմ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ հանձնաժողովի փոխնախագահը մասնակցել է Հայաստանի և Վրաստանի էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների՝ համակարգչային համացանցով հեռարձակվող երկխոսությանը:

### ***Գործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ***

Հանձնաժողովը, կարևորելով էներգետիկայի բնագավառում կարգավորման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման անհրաժեշտությունը, համագործակցում է միջազգային կազմակերպությունների և մի շարք երկրների կարգավորող հանձնաժողովների հետ:

1997 թվականից հանձնաժողովը Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ երկրների կարգավորող մարմինների ընկերակցության, իսկ 2000 թվականի դեկտեմբերից՝ հիշյալ տարածաշրջանի երկրների կարգավորող մարմինների կողմից ստեղծված կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) անդամ է: 2002 թվականին հանձնաժողովի անդամներն ակտիվորեն մասնակցել են վերջինիս բոլոր հավաքներին և սակագնային,

լիցենզիոն ու մրցակցության կոմիտեներում և դրանց շրջանակներում կազմակերպված բազմաբնույթ քննարկումներին:

Շարունակվել է հանձնաժողովի փոխգործակցությունը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ: Որակավորման բարձրացման նպատակով հանձնաժողովի մասնագետները 2002 թվականին մասնակցել են Քենտուկի նահանգի հանձնաժողովի կազմակերպած՝ կառավարման աուդիտի, էներգետիկական շուկայի բարեփոխման, սպառողների կրթական մակարդակի բարձրացման, նրանց շահերի պաշտպանության և այլ հարցերի վերաբերյալ սեմինարներին:

Համաշխարհային բանկի «Ջերմամատակարարման ռազմավարության մշակում» ծրագրի կառավարման խորհրդի կազմում հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են ինչպես խորհրդի, այնպես էլ աշխատանքային խմբերի և մրցութային հանձնաժողովների աշխատանքներին:

2002 թվականի հունիսին հանձնաժողովի երկու անդամներ մասնակցել են Գերմանիայի Քյոլն քաղաքում անցկացված՝ վերականգնվող էներգետիկայի համաշխարհային կոնգրեսի աշխատանքներին:

Հանձնաժողովը մասնակցել է ջերմամատակարարման անհատական և ինքնուրույն համակարգերի, վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման, էներգակայանքների ստեղծման ոլորտում ներդրումների ներգրավման նպատակով արտասահմանյան ընկերությունների և անհատ ձեռներեցների միջև տարվող բանակցություններին:

**«*էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվությունը*»**

«*էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը 2002 թվականին ֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեի միջոցներից.*»

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե /հազ.դրամ/	Տարեկան ճշտված բյուջե /հազ.դրամ/	Ֆինանսավորում /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/
1.	Աշխատավարձ	91726.2	91726.2	91726.2	91726.2
2.	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	12324.0	12324.0	12324.0	11128.4
3.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	592.0	285.9	285.9	285.9

4.	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	5940.0	990.0	989.3	702.9
5.	Տրանսպորտի ծառայությունների վճար	2682.0	2682.0	2682.0	2682.0
6.	Կապի ծառայությունների վճար	1587.9	1587.9	1587.9	2213.0
7.	Էլ.էներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր	1650.0	1650.0	1650.0	1650.0
8.	Ջրնուղ կոյուղուց օգտվելու վարձ	18.0	18.0	18.0	20.9
	Շինությունների և սարքավորումների վարձակալության ծախսեր	5520.0	11760.0	11760.0	11760.0
9.	Ներկայացուցչական ծախսեր	227.5	227.5	207.5	207.5
10.	Այլ ծառայությունների ձեռք- բերման ծախսեր	3000.0	-	100.0	-
	Ընդամենը	125267.6	*123251.5	123230.8	122376.8

\*2002 թվականի բյուջեի տնտեսված միջոցներից 2016.1 հազ.դրամ հատկացվել է նախորդ տարիների պարտքի մարման համար: